

«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԹԵՄԱ՝ Քերականական ուսուցման հիմնական սկզբունքները. դրանց
իրականացման մեթոդիկան

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ՝ Գրիգորյան Օվսաննա

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Բերքառատի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	3
Քերականության ուսուցման հիմնական սկզբունքները. դրանց իրականացման մեթոդիկան.....	4
Քերականության ուսուցման գործնական իրականացման մեր փորձից(հատուկ և հասարակ գոյականների ուսուցման օրինակով).....	16
Եզրակացություն.....	21
Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ.....	22

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Ինչպես հայոց լեզվի բոլոր բաժինների, այնպես էլ քերականության ուսուցումը խիստ կարևոր է, քանի որ դա օգնում է երեխային իմանալ, թե բառը քերականական ինչ հատկանիշներով է օժտված, թե նախադասության մեջ ինչ պաշտոն է կատարում և այլ հիմնահարցեր: Դպրոցական ուսուցման գործընթացում դպրոցի կարևորագույն խնդիրներից քերականական գիտելիքների ուսուցումը: Արդի կրթական պահանջների համապատասխան գիտելիքների ձեռք բերման տեսանկյունից՝ դպրոցում կարևորվում են քերականության ու նրա բաժինների (ձևաբանության, շարահյուսություն) ուսումնասիրման գործընթացում լեզվաքերականական գիտելիքների մասին երեխաների գիտելիքների ձևավորումը, բառերն ըստ առանձին իմաստային հատկանիշների՝ խոսքի մասային պատկանելության տարբերակելու, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները համեմատությամբ վերհանելու, բառերը տարբեր իմաստային խմբերում խմբավորելու նոր կարողությունների ձևավորումը, որին կարող են նպաստել ձևաբանական խաղերի առավել նպատակային օգտագործումը: Նման աշխատանքն օգնում է երեխային հիմնավոր ըմբռնելու բառերի իմաստային տարբերությունները, դրանք ընկալել որպես քերականական հատկանիշներ, կարողանալ դրանք գործածել գրավոր և բանավոր խոսքում՝ փոփոխելով տարբեր քերականական ձևերով:

Ներկայումս կարևորվում են սովորողների ակտիվության բարձրացումը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորումը, ակտիվ և հետաքրքիր ուսուցման գործընթացի ապահովումը, հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, ինքնուրույն գործունեության զարգացումը: Այս առումով հատկանշական է քերականությունն ուսումնասիրելու ուսումնական գործընթացի արդիականացումը խաղային մեթոդների կիրառման միջոցով:

Կրթական արդի պահանջներին համապատասխան ուսումնական գործընթաց կազմակերպելու անհրաժեշտությունը արդիական է դարձրել նաև այս հիմնախնդրի ուսումնասիրումը:

Հետազոտության նպատակը: Հաշվի առնելով նշված իրողությունները՝ այս հիմնահարցերի տիրույթում փորձել ենք դիտարկել քերականության ուսումնասիրման սկզբունքները, դրանց իրականացման մեթոդիկան և հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտական աշխատանքի նպատակից բխել են հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել քերականության ուսուցման հիմնական սկզբունքները. դրանց իրականացման մեթոդիկան:
2. Նկարագրել և վերլուծել քերականության ուսումնասիրման տեսա-գործնական մի շարք հիմնահարցեր:

Քերականության ուսուցման հիմնական սկզբունքները. դրանց իրականացման մեթոդիկան

Նորդպրոցմտնող երեխայի խոսքի զարգացման աշխատանքներն իրականացվում են լեզվական տարրական գիտելիքների ուսուցման միջոցով, որի ընթացքում լուծվում են աշակերտի խոսքի զարգացման միջարքի նդիրներ՝ հնչյուններ իուղագրությունն ու տղղախոսությունը, ճիշտ շեշտադրումը, բառակապակցություններ, ապանախադասություններ կառուցելու կարողությունը, բառի մաստի ընկալման, ճիշտ կիրառմանն ապատկերավոր խոսք կառուցելու կարողությունը: Ամրապնդման համար համապատասխան արկատարվում են ճանաչողական և կիրառական վարժություններ, օգտագործվում ուսումնասոժանղակ տարատեսակ նյութեր:

Լեզվական տարրական գիտելիքների համակարգը նդգրկում է հետևյալ թեմաները՝

- Հայերենի հնչյունները. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ
- Վանկ. միավանկ և բազմավանկ բառեր
- Բառախմբեր. ընդհանուր և մասնավոր անվանումներ
- Բառախմբեր. մոտ և հակառակ իմաստներ ունեցող
- Նախադասություն
- Մեծատառի գործածությունը հատուկ անուններում

Հայոց լեզվի դասավանդմանը նվիրված մեթոդիկաներում (ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան՝ նավանղականն՝ ժամանակակից) նշվում են համոզիչ հիմնավորվում, որ լեզվական, քերականական գիտելիքների ուսուցումն աղղողղությամբ երեխաների կարողություններին ձևավորումնը նդհանրապես պիտի իրականացնել,

շահեկան էիրականացնել փուլափուլ՝ սկսած երեխայի ու սումնական գործունեության առաջին օրից: Պրոֆեսորներ Ա. Տեր-Գրիգորյանը¹ և Ջ.

Գյուլամիրյանը² նշում են քերականության ու սուցման երկու շրջանկամայդ գործընթացը քաժանում են երկու շրջանների՝

ա) լեզվական նախագիտելիքների ու սուցում,

բ) լեզվական տարրական գիտելիքների ու սուցում:

Քերականական գիտելիքների յուրացումը նույնպես կարևոր ինդիք է, որը պահանջում է խելամիտ լուծում: Ինչպե՞ս պիտի կազմակերպել այդ գիտելիքների յուրացումը տարրական դասարաններում, որ գործընթացը ռոչմիայն չդառնա ինքնանպատակ, կրտսեր դպրոցականները ռոչմիայն սիրով յուրացնեն իրենց մայրենի լեզվի քերականությունը, այլևս իրենայն, ձեռք բերեն մայրենի լեզվի մեջ հետագայում նախորամուխ լինելու կարողություններ, ու սումնական արդյունավետ գործունեություն ձևավալելու ունակություններ: Լեզվական, քերականական գիտելիքների ու սուցումն ու սովորողների կարողությունների ձևավորումը պիտի իրականացնել փուլափուլ՝ սկսած երեխայի ու սումնական գործունեության առաջին իսկ օրից:

Լեզվական նախագիտելիքների ու սուցման փուլում կարևորվում են այն հասկացություններ, որ ու սուցումը նունակությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են երեխաների խոսքի, մտածողության զարգացմանը, հասկանալով կարդալու և գրելու տարրական կարողությունների ձեռք բերման, լեզվամտածողության ձևավորման գործընթացում:

¹Տեր-Գրիգորյան Ա.Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., «Լույս», 1980:
²Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ասացման մեթոդիկա, Ե., 2006:

Իսկ լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում իրականացվում է այնպարզ ու մատչելի լեզվական հասկացությունների դասերը,
որոնք անհրաժեշտ են երեխաներին՝ բանավոր կարողությունները զարգացնելու և կարողության ձևավորման, լեզվամտածողության զարգացման համար:
Ուսուցման այս փուլում լեզվական հասկացությունները չեն ուսումնասիրվում գիտական
-լեզվաբանական համակարգով.
դրանք ուսումնասիրվում են՝ հիմքը նդունելով ուսուցման պարզից դեպի բարդը,
ծանոթից անծանոթը տանող սկզբունքները:

Նշված խնդիրների արդյունավետ լուծման համար կարևորագույն տեղ ու դեր ունեն լեզվական տարրական գիտելիքների վերաբերյալ ուսումնաօժանդակ նյութերը:

Ինչպես իրավացիորեն նկատել է պրոֆ. Ա. Ե. Տեր-Գրիգորյանը.
«Մայրենի լեզվի տարրական դասընթացը քերականական նյութերը վերցնելիս աչքի առաջ է ունենում աշակերտների ընդունակություններն ու ընկալման հնարավորությունները, նրանց լեզվական պաշարը ուսուցանելիք նյութերի գործնական արժեքը...»³:

Տարրական դասարաններում լեզվական տարրական գիտելիքների, մասնավորապես՝ մայրենի լեզվի քերականության ուսումնասիրումը միտված է սովորողների լեզվամտածողության, մտավոր և ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանը, լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի կառուցվածքի մասին գիտելիքների ձեռք բերմանը ,
խոսքային գործունեության ընթացքում մայրենի լեզվի հարուստ հնարավորությունները ի արժեք, գրագետ կիրառելու կարողությունների ձևավորմանը:

³Տեր-Գրիգորյան Ա. Ե., էջ 317:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման, ձեռքբերման,
որանք կարողություններին հմտություններին վերաճելու անհրաժեշտությունը հիմնավոր
վում է երեխայի խոսքի հարստացման,

լեզվի մեջ գոյություն ունեցող այն օրինաչափություններին սրբություններին ըմբռնմամբ,
որոնք կարևոր են նեղական քերականական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացում:

Այստեղ պայմանականորեն ընդգրկվում են այն գիտելիքներն ու կարողությունները,
որոնք վերաբերում են բառակազմությանն ու հնչյունաբանությանը:

Ուսումնական գործընթացի այս ժամանակահատվածում առաջնային են նդառնում երեխաներին հնչյունաբանական բառակազմական գիտելիքներն ու կատարողությունները,
որոնք ձևավորվում են հմտություններ դառնում տարրական դպրոցի ավարտին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լեզվազգացողության,
լեզվամտածողության ձևավորման ամենաբարենպաստ շրջանը կրտսեր դպրոցական տարիքն է,

հետևաբար ողորդական նուղող գրական կարողությունները հմտություններին պիտի
վերաճել հենց այս դասարաններում,

հակառակ դեպքում՝ միջին դպրոցում հայոց լեզվի քերականության ուսուցման գործընթացում երեխաները հանդիպում են լեզվական խոչընդոտների: Այսին դիրները նս,

թեև հիմնականում լուծվում են լեզվական գիտելիքների ձեռքբերման երկրորդ՝ տարրական և գիտելիքների ուսուցման փուլում,
սակայն որանք շարունակվում են խորանալ նրա յայն վելն անհաջորդ՝ քերական տարրական գիտելիքների ձեռքբերման փուլում:

Քերականական գիտելիքների ուսուցման փուլում ուսումնասիրվում են շարահյուսությունն ու ձևաբանությունը:

Այսբաժինների ուսումնասիրման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այնձանապարհով, որանցել են երեխաները նախորդ փուլերի ծրագրային նյութերն ուսումնասիրելիս⁴:

Ձ. Գյուլամիրյանը, կարևորելով քերականության ուսումնասիրման մանկավարժական սկզբունքները, նշում է, որ դրանց հաշվառումը լեզվի ուսուցման գործընթացի արդյունավետության պայմանն է, և դրանց անտեսումը կամ ոչ ճիշտ կիրառումը կարող են խոչընդոտել լեզվական գիտելիքների գիտակցական ընկալմանը: Նա մատնանշում է քերականական գիտելիքների ձեռքբերման և ուսուցման հետևյալ սկզբունքները⁵:

1. **Գործնականության սկզբունքը**, որն ընդգրկում է ուսումնասիրվող լեզվական իրողությանը վերաբերող վարժությունների համակարգը:
2. **Ուսուցման գիտակցականության և ակտիվության սկզբունքը**, որը ենթադրում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում աշակերտների ակտիվ գործունեություն, ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառում: Այս սկզբունքի իրականացումը պահանջում է վերլուծման, համադրման, համեմատության, դասակարգման, հակադրման և այլ հնարներ, ինչպես նաև՝ իրազնական և դիտողական միջոցներ, խորհրդանշական գննականություն, աշակերտակենտրոն, փոխներգործուն մեթոդների ու մեթոդական հնարների կիրառում:
3. **Գիտելիքների մատչելիության և կայունության սկզբունքը**, որը նպաստում է երեխաների՝ ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրության և դժվարությունների հաղթահարելիության զգացման ձևավորմանը: Այս սկզբունքի իրականացումը ենթադրում է երեխաների արդեն ունեցած գիտելիքների հաշվառում, ԽԻԿ համակարգի և վարժությունների համակարգի կիրառում, սովորողների ինքնուրույնության ապահովում:

⁴Մարգարյան Շ., Տարրական դպրոցում մայրենիի քերականության ուսուցման գործընթացի փուլերը, էջ 176, <http://shirak.asj-oa.am/303/1/174-178.pdf>

⁵Ձ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Ջանգալ, Ե., 2018, էջ 208-212:

4. **Ուսուցման գնահատականության սկզբունքը**, որով ապահովվում է գիտելիքների խարսխում տեսողական հիմքի վրա:

5. **Նյութի ուսումնասիրման գիտականությունն ու պարբերականությունը**, այս սկզբունքն ապահովվում է ծրագրով և դասագրքով:

6. **Ուսուցման անհատականացման սկզբունքը** բխում է աշակերտների անհատական առանձնահատկություններից, ինչպես նաև նրանց տրամաբանական մտավոր հնարավորությունների և ունեցած գիտելիքների ու ունակությունների հաշվառման կարևորությունից:

Անհատական և տարբերակված մոտեցման իրականացումը հնարավոր է համադասարանային, խմբային, զույքերով աշխատանքի միջոցով: Ընդ որում՝ այդ աշխատանքներում յուրաքանչյուր աշակերտ պետք է կարդա, գրի, պատմի, ակտիվ մասնակցի հարցազրույցին, կատարի տարաբնույթ վարժություններ:

Քերականության բաժինների, օրինակ՝
ձևաբանության ուսումնասիրության գործընթացում ուսուցչի գլխավոր խնդիրը պետք է լինի ասանելի և անհատականացնել ըստ նրանց հատկանշային առարկայական,
որ աշակերտները կարողանան բառերը միայն ցից տարբերել՝ ըստ նրանց հատկանշային առարկայական,
, առարկայական,
գործողության կամ վերաբերականության և անհատականացնել ըստ նրանց հատկանշային առարկայական,
ներքին, այսինքն՝ հիմք պետք է դրվի,
որ պետք է խնդիրները կարողանան բառերը խմբավորել՝ ըստ այս կամ այն խոսքի մասին պատկանելության,
որը հետագայում նրանց կօգնի հեշտությամբ որոշել տվյալ բառի խոսքի մասին պատկանելությունը՝ ուղիղ, և՛ թեք ձևերում: Ըստ նրանց,
հիմք պետք է ձևավորել նաև խոսքի տարբերման երկհատկանիշների վերաբերյալ գիտելիքները յուրացնելու համար:

Այսպես խոսքի մասերի ուսումնասիրությունը պետք է հիմնվի խոսքի այս կամ այն մասին պատկանող բառերի՝ որպես քերականական միավորների ընդհանրությունները, նմանություններն ու տարբերությունները մատնանշելը: Իսկ դրանք հնարավոր է նկատել ընկալել միայն իրար հետ համեմատելով: Այդիսկ պատճառով խոսքի մասերի ուսումնասիրումը նպատակահարմար նարդյունավետ կարող է լինել, եթե կազմակերպվի չթեառանձին-առանձին, այլ փոխկապակցված:

Մասնավորապես՝ համատեղելի է գոյականի, բայի նաժականի ուսումնասիրումը: Դեռևս կեզվական գիտելիքների ուսուցմանն ախապատրաստական փուլում այսպիսի մոտեցման շնորհիվ բարենպաստ պայմաններ են ստեղծվում խոսքի մասերի համեմատման, նրանց հիմնական հատկանիշների ընկալման համար: Խոսքի մասերի վերաբերյալ ընդհանուր ծանոթություն տալուն պատակով երեխաներին առաջարկվում է խառը բառախումբ, հանձնարարվում է հարցերի միջոցով դրանք առանձնացնել նյունական երկվորյալը ստորանցնախապես հայտնի՝ առարկա, գործողությունն առարկայի հատկանիշը նյութով դրա բառերի: Առաջադրանքը կատարելիս աշակերտներին ոգնում են այն հարցերը, որոնք տրվում են նշված խոսքի մասերին: Այս վարժությանը նթացքում երեխաները եզրահանգում են, որ մեր խոսքում ոգտա գործվող բառերը նյութ են տալիս առարկա, գործողությունն հատկանիշ, որնրանցից յուրաքանչյուրն ունի իրեն սրվող որոշակի հարց, նբառերը խոսքում ոգտա գործելիս որոշակի փոփոխություն են կրում⁶:

Քերականական գիտելիքների ուսումնասիրումն առավել շահեկան է իրականացնել վերլուծական-համադրական մեթոդով, քերականական տարբեր իրողությունները համեմատելու, հակադրելու եղանակով: Մասնավորապես՝ մյուս խոսքի մասերի, օրինակ՝

⁶Ձ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկան, 344 էջ:

ածականներին սուցումն առավել արդյունավետ է,
երբ կատարվում է երեխաներին արդեն ծանոթ այլ սոսքի մասերի,
օրինակ՝ գոյականների հետ համեմատության հիման վրա:
Ածականն ունենալու մեծ մասով շատ պարզ կլինի,
եթե այն կապենք ածականների արտահայտած հիմնականի մաստի հետ:
Ածականները ընդ որայնքառերն են, որոնք արտահայտում են առարկայի որպիսությունը,
հատկացությունը, ինչպիսիք են լը, ինչից լինելը:
Բերված օրինակներում ընդգծված կանաչ,
քաղցր կերպարաբանությունը ցույց են տալիս հատկություն:
Ձևաբանական տեսակետից շատ դժվար է այս բաները ամփոփել ընդհանուր կարգի
տակ:

Ածականներին սուցումն ապրիման համար գործադրվում է ինդուկտիվ մեթոդ.
ուսուցիչը գրում է մի շարք բառեր, որքան կարելի է՝ իմաստով միայն ցմոտ:
Դրանից հետո աշակերտներին առաջարկվում է պարզել,
թե ինչ են ցույց տալիս այդ բառերը⁷: Ընտրվածները պետք է որակ ցույց տվող բառեր լինեն,
որպեսզի աշակերտները հեշտությամբ մեծ են ածականի էական հատկանիշները:
Երբ աշակերտները պարզում են, որ այդ բառերը ցույց են տալիս որպիսություն,
ուսուցիչը տալիս է ածականի սահմանումը:
Ածականի սուցումն ապրիմումը սարդյունավետ է իրականացնելաբնույթ ուսուցողական
արություններին միջոցով:

Մյուս սոսքի մասերին սուցումն ապրիման խնդիրները նույնպես լուծվում են հիմնականում
վերը քննարկված մոտեցումներով:

Քերականության ուսուցումը սովորաբար իրականացվում է նախ՝ զրույցի միջոցով,
որը զուգորդվում է ուսուցչի համապատասխան հարցադրումների համապատասխան է
րեխաների պատասխանների արձանագրումով,

⁷Ս. Ս. Ղարիբջան, *Հայոց լեզվի դասական նորման մեթոդիկա*, Երևան, 1954, էջ 216-217:

դրանց շուրջ համապատասխան վերլուծությունով,
որից հետո՝ աշակերտները փորձում են ուսուցչի ոգնությամբ համակարգել ձեռք բերված գիտելիքները և ամրապնդել արդեն խաղային գործունեության միջոցով:

Դրանք կարելի է նաև կազմակերպել և իրականացնել նյութի ուսումնասիրման տարբեր փուլերում:

Դասարանում ուսուցչի ներածական խոսքի,
զրույցի ընթացքում արդյունավետ են նաև նկարագրող ու մեթոդն ու թյամբ կազմակերպվող ձևաբանական խաղերը,
որոնք ուսուցիչը ներկայացնում է դրանց համապատասխան հարցադրումների միջոցով՝ առավել պատկերավոր բնութագրում ուսումնասիրվող խոսքի մասին բնորոշի մաստային և քերականական հատկանիշները:

Այսպես՝ ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թվարկել ո՞վ կամ ի՞նչ հարցերին պատասխանող բառեր և դրանք խմբավորել ըստ տրված հարցերի:

Այսին դրի լուծմանն պատակով՝ կարելի է կիրառել ձևաբանական խաղեր,
օրինակ՝ նախապես պատրաստված նկար - քարտերի կիրառում:
Անձև իր ցույց տվող առարկաներին կարներ պատկերող նկար-քարտերը տեղադրվում են գրատախտակի տեսանելի հատվածում:

Դասարանը բաժանվում է երկու խմբի:
Ուսուցիչը հանձնարարում է առաջին խմբի երեխաներին՝ ընտրել այն նկար-քարտերը,
որոնք ցույց են տալիս անձ, իսկ երկրորդ խմբի երեխաներին՝ իր ցույց տվողները:
Դրանից հետո, ուսուցիչը հնչեցնում է անձի համար՝ ո՞վ հարցը,
որին հիպատասխան առաջին խմբի երեխաները պետք է նշեն անձ ցույց տվող բառ կամ բառերը ընտրեն անձ ցույց տվող նկար-քարտերը:

Նույն կերպ նաև երկրորդ խմբի երեխաները՝ ուսուցչի ի՞նչ հարցին հիպատասխան նշում են իր ցույց տվող առարկաներն նկար-քարտերի շարքից ընտրում իր ցույց տվողները:
Խաղը կարելի է կազմակերպել մրցութային հիմքով՝ այն խումբը,

որնավելի շատ նկար-
քար տկար ողանա ընտրել և իրենց տրված հարցին համապատասխան ավելի շատ բառեր
նշել, այդ խումբն էլ կհամարվի խաղի հաղթող: Նշենք նաև,
որ աշակերտների՝ ուսուցչի տրված հարցին հինչեցրած պատասխանները գրառում է գրատա
խտակին՝ ըստ անձևի բցույց տվող գոյականների խմբավորման:

Յուրաքանչյուր նկարի շուրջ հարցադրումների և պատասխանների միջոցով քննա
րկումն ու գնում է կապատեղծել առաջադրված հարցին նկարում պատկերված առարկայի մ
իջև, ինչպես նաև ակնառու կդառնա, որ կապ,
նմանություն կամ ընդհանրություն կանաև այն բառերի միջև,
որոնք պատասխանում են անձի դեպքում՝ ո՞վ, իրի դեպքում՝ ի՞նչ հարցերին:
Երեխաներին պարզեղառնում, որ այդ ընդհանրությունն այն է,
որ ի՞նչ հարցին պատասխանող բառերը ցույց են տալիս իրեր,
իսկ ո՞վ հարցին պատասխանող բառերը՝ անձեր:

Այս փուլում երեխաները կիմանան,
որ առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուն:

Կարելի է նաև առաջարկել *նկարներին ինչ խումբ մեկ բառով անվանել՝ ա* կակաչ,
երիցուկ, վարդ (բույս/ծաղիկ), բ) բաժակ, ափսե (սպասք), գ) սեղան, աթոռ, պահարան
(կահույք), դ) տաբատ, վերնաշապիկ, զգեստ (հագուստ), ե) խնձոր, խաղող, սերկեվիլ
(միրգ), ե) արջ, աղվես, գայլ (կենդանի):

Առարկա ցույց տվող բառերի և դրանց մեջ մտնող բառերին առաջադրվող հարցերի մ
իջև որոշակի կապատեղծելուն պատակով պետք է կատարել բազմաթիվ համանման խաղ-
վարժություններ, որոնց միջոցով երեխաները կգանայնեզրահանգման,
որբայրև ածականը անձևի բցույց են տալիս:

Ածականների ուսումնասիրումը կարելի է իրականացնել ձևաբանական խաղերից
՝ բնութագրի բցույցադրված առարկան առաջադրանքների ձևով:

Այսպես կարելի է կազմել աղյուսակ,
ապա երեխաներին առաջարկել թվարկել ցուցադրված այս կամ այն առարկայի բոլոր հնարավոր հատկանիշները, օրինակ՝ ուսուցիչը դասարանը բաժանում է 5-7 խմբերի, խմբերի ցուրաքանչյուրին տրվում է մեկական առարկան առաջադրանք՝ թվարկել այդ առարկայի հնարավորինս շատ հատկանիշներ: Այն խումբը, որն առավել շատ հատկանիշներ կնշի, այդ խումբն էլ կճանաչվի հաղթող: Պատասխաններն ուսուցիչը գրառում է յուրաքանչյուր առարկայի համար աղյուսակում առանձնացված սյունակում: Օրինակ՝ խմբերից մեկին առաջարկվում է թվարկել սեղան, գիրք, միրգ կալառարկաների հատկանիշները, մյուս խմբին՝ ձևեռ, արև, ջուր կալառարկաներինը կալալ: Երեխաները կթվարկեն՝ սեղան - բարձր, կարմիր, փայտյա, քառանկյունի, հղկված, մաքուր կալալ հատկանիշներ, կամ՝ միրգ - հյութալի, քաղցր, կանաչ կալալ: Երեխաների որոնման ունակություններն ակտիվացնելու համար *հարցնում ենք*. «Ի՞նչ կարող է լինել՝ դեղին, հյութալի, բուրավետ» (մատիտ, զգացողություն, գրիչ, միրգ), «կարմիր, կլոր, փայլուն» (կեռաս, զատիկ, խնձոր): Տրված պատասխաններին, որոնք պետք է լինեն մենաբառ, առաջարկվում է համապատասխան հարցադրումներով վերագրել այլ հատկանիշներ՝ համեղ, գունեղ, հյութեղ, քաղցր, դառը, լուսավոր, գեղեցիկ կալալ:

Կարելի է այս տեղ կատարել նաև համանման այլ խաղ-վարժություններ.

1. *Նշված բառախմբերից* (ցանկալի է, որ բնորոշման համարը նտրվեն տարբեր իրեր, առարկաներ կամ երևույթներ, օրինակ՝ միրգ, կենդանի, գույք կալալ) *ընտրել տվյալ իրին/առարկային կամ երևույթին բնորոշները (հատկանիշերը/անվանումները), ընտրել ու ցիտոկարող ենք երեխաներին նաև առաջարկել իրենք սնշեն համանման բնորոշիչ բառեր.*

Խնձոր – կարմիր, քաղցր, կլոր, ոսկեգույն, անճոռնի, մոխրագույննայլն.

Մեղան – փայտե, երկաթյա, ամուր, տաք, գեղեցիկ, քաղցր, կլոր, շատակերևայլն.

Արջ – ծուռթաթ, մեծ, փափուկ, գիշատիչ, ընտանի, վայրի, լուսավոր, արագավազնայլն:

2. *Նշե՛ք, թեբերվածբնութագրումներից, հատկանիշներիցորո՞նքենբնորոշտրվածիրին/առարկայինկամերևույթին.*

շոգ, ուրախ, չոր, արևոտ, ցուրտ, տաք, ջերմ, ձնառատնայլն – ամառ.

տխուր, զվարթ, մրգային, փափուկ, արևային, կանաչ – տղա:

3. *Անվանեքյուրաքանչյուրքարտիիրերբմեկհատկանիշով:*

Մենքառաջարկումենքերեխաներինքարտեր՝ տարբերառարկաներիպատկերներովսեղան (հատկանիշներ՝ մեծ, փոքր), տարբերմրգերիպատկերներով (խնձոր, խաղող,սալոր – համեղ, քաղցր, կլոր) նայլն:

Երեխաներիուշադրությունըպետքէհրավիրելնասայնկարևորիրողությանվրա, որերբեմնկանորոշբառեր, որոնքգոյականեն, հատկապեսայնպիսիգոյական, որոնքհատկությունենցույցտալիս, կարողենշփոթվելածականներիհետ, օրինակ՝ լավություն, բարություն, խելոքություն, գեղեցկություննայլն:

Այսդեպքումպետքէբացատրել, որդրանքցույցենտալիսիբրևառարկաանվածգաղափար, այսինքն՝ ինչլինելը, ոչ՝ ինչպիսինլինելը:

Այստեղերեխաներիուշադրությունըպետքէհրավիրելնասայնհանգամանքիվրա, որնմանգոյականներըմեծմասամբկազմվածենածականներից՝ լավ- լավություն, բարի – բարություն, քաջ – քաջություն, խելոք – խելոքություն, գեղեցիկ – գեղեցկություննայլն:

Այսամենընսարդյունավետկլինիիրականացնելձևաբանականխաղերիմիջոցով.
Աշակերտներինտրվումենաձականներիբառաշարքերևառաջարկվումդրանցիցկազմել
գոյականներ,
ապափորձելաձականներնուղղրանցիցկազմվածգոյականներըգործածելայլառարկայա
նիշբառերիհետ, որիարդյունքումերեխաներըպարզումեն,
որ**բարխևարդ**բառակապակցությանմեջ**բարին**մարդուհատկնիշնէ,
այսինքն՝ցույցէտալիսմարդուինչպիսիլինելը,
մինչդեռ՝**բարություն**մարդկառույցըոչմիայնճիշտչէ,
այլև՝բարությունըցույցէտալիսառարկայիինչլինելը:

Տարբեր խոսքի մասերի համեմատությամբ այս կամ այն խոսքի մասի ուսումնասիրումը արդյունավետ կարող է լինել հետևյալ խաղի կազմակերպման միջոցով: Այսպես՝ երեխաներին կարելի է առաջարկել տարբեր առարկաներ, գործողություններ, հատկանիշներ պատկերող նկարներ, դրանք կարող են լինել նաև համապատասխան բառի գրառումով, այնուհետև նրանց բաժանվում են քարտեր, որտեղ ուսումնասիրվող խոսքի մասին և արդեն երեխաներին ծանոթ այլ խոսքի մասերին վերաբերվող հարցեր են՝ ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ինչպիսի՞, որպիսի՞, և երեխաները պետք է պատասխանեն հարցերին ու ասեն, թե ո՞ր նկարի ներքո պետք է դնեն տվյալ հարցը կրող քարտը:

Այսպիսով՝կատարվածուսումնասիրություններիցպարզէդառնում,
որքերականության
ուսումնասիրումըկարևորտեղունիևայնառավելարդյունավետհնարավորէիրականաց
նելտարբերմեթոդներիակտիվկիրառմանմիջոցով՝քերականությանուսուցմանհիմնար
արսկզբունքներիհաշվառմամբ:

Քերականության ու սուցման գործնական իրականացման մերփորձից (հատուկ կնի հասարակ գոյականների ու սուցման օրինակով)

Դեռևս տարրական դասարաններից աշակերտները գիտեն գոյականի մասին, քերականական որոշ հատկանիշների ծանոթ են: Նրանք գիտեն, թե որ բառերն են պատասխանում ^օվոլքե ^օր, ի ^օնչինչե ^օր հարցերին, գիտեն նաև, որ գոյականները լինում են հասարակ կնի հատուկ այլն:

Ուստի հատուկ կնի հարակց գոյականների ու սուցումը պետք է հենվի առարկայից սովորաբար մասին երեխաների ունեցած գիտելիքների վրա՝ պարուրաձև ու սուցման սկզբունքի հաշվառմամբ և ԽԻԿ համակարգի կիրառմամբ: Հատուկ կնի հարակց գոյականների մասին աշակերտները գործնականորեն իմացել է նդեռևս գրաճանաչության շրջանում:

Խթանման փուլ

Մինչքոն թե մային անցնելը՝ առանձին հարցադրումներով, նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է նդրադարձանցածնյութին և վերհանվում աշակերտների ունեցած գիտելիքներն ու սումնասիրվելիք դասանյութի վերաբերյալ: Այնուհետև կրատախտակի կենտրոնում ու սուցիչը գծում է մի քանի շրջանակ՝ ճառագայթներով, և առաջարկում <<Մտագրոհի>> մեթոդով յուրաքանչյուր ճառագայթի վրա, ու սուցիչուղորդմամբ, նշել շրջանակներում տրված բառերին համապատասխան այլանվանումներ: Ուսուցիչը գրի է առնում բոլոր հնարավոր պատասխանները: Պատկերն այսպիսին է՝

- աղջիկ – Հասմիկ, Անուշ, Կարինե, Գոհար, Աննա, Անահիտ, Լուսինե
- տղա – Արամ, Արմեն, Գևորգ, Դավիթ, Սասուն
- սար – Մասիս, Սիս, Սիփան, Արագած
- քաղաք – Երևան, Մոսկվա, Վանաձոր, Գյումրի

Անուհետև կատարվում է այս բառախմբերի բառերի համեմատություն,
որի ընթացքում ուսուցիչն աշակերտներին ուշադրությունը սևեռում է այն իրողության վրա,
որ շրջանակում տրված գոյականն անունները տեսակի անուն են ընդհանուր են տվյալ տեսակի
բոլոր գոյականներին համարևոր դրանք հասարակ գոյականներ են,
իսկ ճառագայթներին վրան շված գոյականները տվյալ տեսակի ցմիայն մեկի անվանումներ
են, որոնք տրվում են մյուսներից տարբերելու համարևոր դրանք հատուկ գոյականներ են:
Երեխաներին բացատրվում է, որ աղջիկ, տղա, սար, քաղաք գոյականն անունները ընդհանուր կամ ընդհանրացնող անուններ են:
Կարևոր է աստարաբնույթ վարժություններին իջոցով երեխաներին հասկանալի դարձնել,
որ հատուկ անունները հոգնակի թիվ չեն ունենում: Սակայն պատահում է,
որ խոսքում երբեմն ոգտագործվում են հոգնակի թվով հատուկ անուններ,
որոնք մատնանշում են ոչ թե տվյալ անձի եզակիությունը, այլ նրանց կերպարային,
ընդհանրական բնույթը:
Այս դեպքում նրանք դառնում են հասարակ անուններև գրվում փոքրատառով:
Օրինակ՝ <<Հիմա ելմ երմեջ շատ զիմ-զիմով ներկան>>:

Իմաստի ընկալման փուլ

Իրականացվում է խմբային աշխատանք,
որի համար աշակերտները բաժանվում են խմբերի:
Այն իրականացվում է խաղային մեթոդով:
Այսպես՝ խմբերից յուրաքանչյուրին հանձնարարվում է մյուս խմբի համար գրել հասարակ
և հատուկ գոյականներ ի բառաշարքեր,
որոնց համապատասխան հատուկ և հասարակ գոյականներ պետք է գրի մյուս խումբը:
ը:

Առաջին խումբ՝

Գրել տրված հասարակ գոյականներին համապատասխան հատուկ անուններ

մարդ –

բնակավայր –

զետ –

ծով –

աղջիկ –

տղա –

հայրիկ –

մայրիկ –

քույրիկ –

եղբայր –

տատիկ –

պապիկ –

բանաստեղծ -

1. Երկրորդ խումբ՝

Գրել տրված բառախմբերից յուրաքանչյուրն ընդհանրացնող կամ դրանց համար ընդհանուր անուններ

Արմինե, Աշխեն, Գայանե, Թամարա, Արևիկ Վարդուհի -

Արզամ, Վահան, Կարեն, Արմեն, Վարդան –

Ապարան, Ստեփանավան, Ալավերդի, Կապան –

Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Պարույր Սևակ –

Սև ծով, Միջերկրական ծով –

Երևան, Մոսկվա, Կիև, Փարիզ –

և այլն:

Նմանատիպ այլ վարժությունների կատարման ճանապարհով աշակերտները ձեռք կբերեն նաև առանձին ընդհանրացնող անունների խմբին համապատասխան հատուկ անուններ ասելու և գրելու կարողություններ (և ընդհակառակը):


Այսպիսով՝ խմբերից մեկը թվարկում է մյուս խմբի առաջարկած հասարակ գոյականներին համապատասխան հատուկ անուններ, մյուս խումբը՝ պատասխանող խմբի առաջարկած հատուկ անուններն ընդհանրացնող հասարակ անուններ: Նման աշխատանքն առավել տեսանելի է և դյուրըմբռնելի է դարձնում հատուկ և հասարակ գոյականների տարբերությունները: Այնուհետև կատարվում են լրացումներ՝ հասարակ անուններ առաջարկած խումբը հավելում է այլ հասարակ անուններ, իսկ մյուս խումբը՝ հատուկ: Ավելի շատ գոյականներ է թվարկող խումբը համարվում է խաղի հաղթող:

Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է՝ **տրված բառաշարքից ընտրել հատուկ և հասարակ գոյականներն ու գրել յուրաքանչյուրի համարնախատեսված առանձին սյունակում՝ աղջիկ, տղա, Երևան, Արաքս, Վահե, լիճ, Սևան, գետ, Անահիտ, քաղաք, սար, բանաստեղծ, Մասիս, նկարիչ, Համո Սահյան, Մարտիրոս Սարյան և այլ:**

Հասարակ գոյականներ	Հատուկ գոյականներ
աղջիկ	Անահիտ
տղա	Վահե
լիճ	Սևան
գետ	Արաքս
քաղաք	Երևան
սար	Մասիս
բանաստեղծ	Համո Սահյան
նկարիչ	Մարտիրոս Մարյան

Կշռադաստման փուլ

Հանրագումարի են բերվում ստացած գիտելիքները: Խմբերը նախապես կազմած իրենց հարցերն ուղղում են միմյանց, ստացված պատասխանները համադրում՝ հատուկ և հասարակ գոյականների բնութագիրն ամբողջացնելու նպատակով: Արդյունքները համագումարի բերելուն հաջորդում է <<Վենի Դիագրամ>> մեթոդի կիրառումը, որի օգնությամբ աշակերտները կարողանում են համեմատել, միմյանց հակադրել ու տարբերակել հատուկ և հասարակ գոյականները:



Նմանատիպ աշխատանքի շնորհիվ՝ աշակերտները հասկանում են, որ հասարակ անունը տեսակի անուն է և ընդհանուր է տվյալ տեսակի բոլոր առարկաների անձերի համար, իսկ հատուկ անունը՝ այդ տեսակից մեկի անունն է և տրվում է միայն մեկին՝ մյուսներից տարբերելու համար:

Հատուկ և հասարակ գոյականներն ուսումնասիրելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել բաղադրյալ հատուկ գոյականների ուղղագրությանը: Այս դեպքում պետք է հասնել այն բանին, որ աշակերտները սովորեն, թե ո՞ր դեպքերում բաղադրյալ հատուկ անվան քանի բաղադրիչն է գրվում մեծատառ: Նախ պետք է ուսուցանել, որ հայերենում կամ բաղադրյալ հատուկ անվան առաջին բաղադրիչն է գրվում մեծատառ, կամ՝ բոլոր բաղադրիչները: Այնուհետև անհրաժեշտ է անդրադառնալ այն դեպքերին, երբ կամ առաջին բաղադրիչն է մեծատառով, կամ՝ բոլոր բաղադրիչները:

Եզրակացություն

Ամփոփելով քերականության ուսուցման սկզբունքների և դրանց իրականացման մեթոդների շուրջ սույն աշխատանքը կատարել ենք մի շարք հետևություններ.

Քերականական գիտելիքների ուսումնասիրման գործընթացը ենթադրում է այնպիսի սկզբունքների և դրանց իրականացման մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում մեկերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

1. Խոսքի մասերի

ուսուցման ճանաչողական գործընթացն ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ զրույց, ուսուցչի ներածական խոսք՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով գործնական վարժություններ:

2. Քերականական իրողությունների տարբերակման կարողությունների ձևավորման գործընթացում կիրառվող մեթոդները և հաշվառվող սկզբունքները նպաստում են լեզվական իրողությունների քերականական հատկանիշների համաձայն դաստիարակելու երեխաների կարողությունների ձևավորման համար:

3. Վերլուծական-համադրական մեթոդի միջոցով քերականության ուսուցումն առավել արդյունավետ է կազմակերպվում այս կամ այն քերականական հատկանիշն ուսուցանելու ժամանակ՝ դասագործընթացի տարբեր փուլերում:

4. Բոլոր առողջ երեխաները կարող են յուրացնել հայերենի քերականությունը, պարզապես կարևոր է գիտակցել, որ բոլոր երեխաների

համար ընդունելի չեն այդ հմտությունների ձևավորման միևնույն մեթոդն ու ժամաքանակը, վարժությունների տեսակն ու քանակը: Այդուհանդերձ՝ տարրական դպրոցում կրտսեր դպրոցականներին առավել գրավում է խաղային ու մրցութային տարրերով ուսուցումը, ուստի՝ ձևաբանական խաղերի օգտագործումը պետք է դարձնել նպատակային:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. ԳյուլամիրյանՋ., Հայոցլեզվիտարրականասացմանմեթոդիկա, Ե., 2006:
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիիուսուցմանմեթոդիկա, Ջանգակ, Ե., 2018:
3. Տեր-ԳրիգորյանԱ.Ե., Հայոցլեզվիմեթոդիկա, Ե., «Լույս», 1980:
4. Ա. Ս. Ղարիբյան, Հայոցլեզվիհասարակականմեթոդիկա, Երևան, 1954:
5. ՍարգսյանՇ.,

Տարրականդպրոցումմայրենիիքերականությանուսուցմանգործընթացիփուլեր
ը, էջ 176, <http://shirak.asj-oa.am/303/1/174-178.pdf>

